ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՐԵՎՄՏԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ*

Նունե Մելքոնյան

Բանալի բառեր՝ Արևմտյան Եվրոպա, մուսուլմանական համայնքներ, իսլամական կրթություն, համալսարաններ, դպրոցներ, կրոնագիտություն:

Մեր կողմից հետազոտության համար ընտրված երկրներում մուսուլմանական բնակչության՝ եվրոպական արժեհամակարգին ընտեգրվելու գործում էական նշանակություն ունի կրթական գործող համակարգը: Արևմտյան ժողովրդավարությունների ընձեռնած լայն ազատություններից օգտվելով՝ մուսուլմանական համայնքները ստեղծել են միջնակարգ և բարձրագույն իսլամական դպրոցների ցանց: Իրավիճակի ուսումնասիրություններն այս ոլորտում, ցույց են տալիս, որ մուսուլմանները ստեղծելով իրենց կրթական հաստատությունները, ոչ թե ինտեգրվում, այլ ավելի են հեռանում եվրոպական հասարակություններից:

Ֆրանսիայի *միջնակարգ դպրոցներում հայտնվել են պետական ճանաչում ունեցող կամ չունեցող իսլամական բնույթի մի շարք ծրագրեր և մասնավոր միջնակարգ դպրոցներ: 2003-ին հիմնադրված Լիլի «Ավերրոես»/Averroes իսլամական միջնակարգ դպրոցը, առաջինն է, որ պետական ճանաչում ունի և ստանում է մասնակի պետական ֆինանսավորում: Իսլամական դպրոցներ բացվել են նաև Փարիզում, Լիոնում և այլուր[1]: Դրանցից մի քանիսը բարձր կարգավիճակ են ձեռք բերել: Ֆրանսիայում մուսուլմաններն իրենց բարձրագույն կրթությունը կազմակերպում են միայն մասնավոր հաստատություններում, որոնք քիչ թե շատ կապված են հիմնական կրոնական ֆեդերացիաների հետ: Բացառված չեն նաև պետական նախաձեռնությունները: Օրինակ՝ 2008թ.-ից Փարիզի Մեծ մզկիթին կից երկամյա ուսումնական ծրագիր է գործում՝ ֆրանսիական օրենք, ֆրանսիական պատմություն, կրոնի սոցիոլոգիա ուսուցման համար: Այնուհետև Ստրասբուրգի պետական համալսարանը 2012 թվականին բացեց հատուկ ծրագիր՝ կրոնական և ասոցիատիվ առաջնորդների համար՝ «Օրենք, հասարակություն և կրոնների բազմազանություն» անունով: Ինչպես Փարիզում, այն դիպլոմ տրամադրող համալսարանական մեկամյա ծրագրով դասընթաց է, որը հիմնված է կրոնի և իրավունքի, պատմության և սոցիոլոգիայի վրա: Բոլոր դասընթացները դասավանդվում են պետական հաստատություններում և համալսարաններում ներգրավված գիտնականների և հետազոտողների կողմից: Նույն համալսարանում արդեն 2009-ի սեպտեմբերից սկսվեց իսլամագիտության ոլորտում իրավագիտության և կրոնական հետազոտությունների մագիստրոսական ծրագիր: Կա նաև հստակ նպատակադրված գործունեություն՝ Իսլամական աստվածաբանության առանձին ֆակուլտետներ բացելու ուղղությամբ, որպեսզի հնարավոր լինի վերապատրաստել իսլամադավան աստվածաբաններին, իմամներին և հոգևորականներին (հնգամյա ուսումնական ծրագիր): Այդ նպատակով փորձում են Ֆրանսիայի համալսարանների հետ համագործակցել և մուսուլմանական այդ ֆակուլտետները դարձնել քրիստոնեական՝ կաթոլիկ և բողոքական աստվածաբանության ֆակուլտետներին համարժեք:*

Գերմանիայում *կրոնական կրթությունը պարտադիր առարկա է հանրային դպրոցներում, որն օրենսդրության համաձայն պետք է դասավանդվի պետության և համա-*

---

* Հոդվածն ընդունվել է 01.10.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանը: 05.10.21:

պատասխան կրոնական համայնքի համագործակցության պայմաններում: Իսլամական համայնքային կազմակերպությունները շատ արդյունավետ օգտագործում են այս հնարավորությունը: 2008-09 թթ. ի վեր բազմաթիվ հողեր (Հյուսիսային Ռեյն Վեսթֆալիա, Բեռլին, Հեսսե, Բավարիա) ճանաչել են, որ ալևիների համայնքն ունի այնպիսի կառույց, որի հետ կարելի է նման ձևով համագործակցել[2]: Դպրոցական օրենքի առումով որպես կրոնական համայնք ճանաչումը պահպանելը գոյություն ունեցող մուսուլմանական կազմակերպությունների համար խիստ կարևոր նպատակ է՝ թե՛ դաշնային, թե՛ տարածաշրջանային մակարդակներում: 2003թ. ի վեր մի շարք դաշնային հողեր (Հյուսիսային Ռեյն-Վեսթֆալիա, Բավարիա, Ներքին Սաքսոնիա, Բադեն-Վյուրտեմբերգ և Ռինելանդ-Պալատինատե) սկսել են իսլամի դասավանդման փորձնական նախագծեր: Նման համագործակցության բնույթը կախված է կոնկրետ հողային (նահանգային) իշխանությունների գործելաոճից ու ակնկալիքներից, սակայն բոլոր դեպքերում էլ մուսուլմանները լայնորեն ներգրավված են ուսումնական ծրագրերը կազմելու և ուսուցիչներին նշանակելու գործընթացի մեջ: 2008թ. Գերմանական իսլամական կոնֆերանս (Deutsche Islam Konferenz-DIK) կազմակերպությունը մի ուսումնասիրություն հրապարակեց[3], որը մանրամասնում էր թեմաները և առաջարկում լուծումներ: 2009թ. Բավարիայի հողը, Էռլանգեն քաղաքի մոդելի համաձայն, իսլամի ուսուցումը հաստատեց ողջ նահանգի մակարդակով՝ սերտորեն համագործակցելով Կրթության նախարարության, Էռլանգենի իսլամական համայնքի և Էռլանգեն-Նյուրնբերգի համալսարանի հետ[4]: Այս մոդելը մինչև 2013թ. ընդգրկեց մոտ երեք հարյուր կրթական հաստատություն: Իսլամի ուսուցումը ներառվեց բազմաթիվ հանրային դպրոցներում: Մուսուլմանները հարկ եղած դեպքում դիմում են դատարաններ դպրոցներում առանձին արտոնություններ ստանալու համար, եթե կրթական կանոնակարգը հակասում է իրենց ավանդույթներին: Օրինակ՝ դատարանը մուսուլման աշակերտներից դիմումներ է ստացել այնպիսի դպրոցներում լողի պարտադիր դասերից ազատվելու մասին, որտեղ դասերին մասնակցել են երկու սեռի աշակերտներ: Քանի որ երկրում կրոնական ազատության պաշտպանությունը ներառում է հանրային դպրոցները, ուստի, սկզբունքորեն, առարկություն չկա, որ աղոթքը տեղի ունենա նաև դպրոցներում, սակայն աշակերտների միջև լարվածությունից խուսափելու համար տեղական իշխանությունները կիրառում են սահմանափակումներ: Հիմնվում են նաև մասնավոր կրոնական դպրոցներ: Իսլամն առկա է նաև բարձրագույն և մասնագիտական կրթության մեջ: 2003թ. ի վեր Էռլանգեն-Նյուրնբերգի, Մյունստերի և Օզնաբրուկի համալսարանները ծրագրեր են ստեղծել մուսուլման ուսուցիչներ պատրաստելու համար և դասախոսական հիմնական կազմի մեջ ներգրավել են մուսուլման պրոֆեսորների: Մշակվել ու հրատարակվել են առաջին ուսումնական նյութերը[5], որոնք վերաբերվում են ժամանակակից մուսուլմանական կրոնական մանկավարժությանը: Մի շարք համալսարաններում հիմնադրվել է լայն գիտական իմաստով իսլամի աստվածաբանությունը (որը կոչվում է նաև «իսլամագիտություն», «իսլամի կրոնագիտություն» կամ «իսլամի աստվածաբանություն»), որի նպատակն է կրոնամետ կրթությունն ու հետազոտությունը: Այս գործը դրսից ակտիվ ֆինանսավորում են թուրքական կազմակերպությունները: Արդյունքում Էռլանգեն-Նյուրնբերգի, Ֆրանկֆուրտի, Հեսենի, Մյունստերի, Օզնաբրուկի և Տյուբինգենի համալսարանները հիմնել են նման հետազոտությունների բաժիններ՝ սերտորեն համագործակցելով գոյություն ունեցող ֆակուլտետների ու նման ոլորտներում համագործակցության գերմանական իրավական համակարգի համաձայն գործող խորհրդատվական խորհուրդներում հավաքված մուսուլման ներկայացուցիչների հետ:

Մեծ Բրիտանիայի *դպրոցական կրթության հստակ աշխարհիկացմանը զուգահեռ՝ կրոնի տեղը շարունակել է ճանաչվել հիմնական կրթական ակտերում: Կրոնական դաստիարակությունը պարտադիր է, ծրագրերը, որոնք պարունակում են տեղական մակարդակում համաձայնեցված տարրեր, ունեն ավելի շատ տարբեր կրոններին*

առնչվող շեշտադրում և պարունակում են իսլամի վերաբերյալ նյութեր: Տարիների ընթացքում պետական դպրոցների մեծ մասը, որտեղ դեռևս կրթվում են մուսուլման աշակերտների ճնշող մեծամասնությունը, փորձում են բավարարել էթնիկ և կրոնական փոքրամասնությունների կարիքները[6]: Մուսուլման երեխաների մի փոքր հատված հաճախում է իսլամական անկախ դպրոցներ. Մուսուլմանական դպրոցների ասոցիացիան http://www.ams-uk.org/, (հիմնվել է 1990թ.) ներկայումս իր կայքում ընդգրկում է Մեծ Բրիտանիայի 172 մուսուլմանական դպրոց: Պետական և անկախ հատվածներից դուրս, մուսուլման երեխաներն իսլամական կրթություն են ստանում երեկոյան կամ հանգստյան օրերին՝ համայնքային լրացուցիչ դպրոցներում, սովորաբար տեղական մզկիթներում կամ հարակից համալսարաններում: Արաբերենով Ղուրանը կարդալ սովորելը (եթե ոչ հասկանալը) և կրոնի հիմնական հավատալիքներն ու սովորույթները դասավանդելը տասնամյակներ շարունակ Բրիտանիայում իսլամի ինստիտուցիոնալացման առանձնահատկությունն են եղել: Ավանդապահ և կրոնասեր ծնողները, կասկածներ ունենալով ժամանակակից մանկավարժության մասին, իրենց երեխաների համար գտնում են այլընտրանքային պարապմունքներ, որոնցից են՝ հանգստյան օրերին կազմակերպվող անգլերեն լեզվով իսլամական ուսումնասիրությունները: Մզկիթներ էլ կան,որ սկսել են վարձել ուսուցիչներ, լրացուցիչ կրթություն կազմակերպելու համար: Նման հաստատությունների գոյությունը գնալով առաջ է բերում տեղական մարմինների մտահոգությունը, որոնք զբաղվում են երեխաների բարօրության և պաշտպանության հարցերով:

Բարձրագույն կրթության ոլորտում իսլամագիտությունն առաջարկվում է մեծ թվով համալսարաններում, սովորաբար արաբագիտության և մերձավորարևելյան հետազոտությունների կամ կրոնական հետազոտությունների բաժիններում/ֆակուլտետներում, որոնք երբեմն ֆինանսավորվում են Սաուդյան Արաբիայից, Պարսից ծոցի և այլ երկրներից՝ հարուստ հովանավորների կողմից: Բացի ավանդական արևմտյան և իսլամական կրթաթոշակներից, որոշ համալսարաններ այժմ իսլամագիտությունն առաջարկում են նաև՝ որպես ուսուցիչների և երիտասարդ աշխատողների մասնագիտական վերապատրաստման բաղադրիչ: 2007թ. Անգլիայի Բարձրագույն կրթության ֆինանսավորման խորհուրդը՝ «Իսլամը Անգլիայի համալսարաններում» զեկույցի բոլոր ասպեկտներն ուսումնասիրելու արդյունքում, իսլամագիտությունն անվանեց ռազմավարական նշանակություն ունեցող թեմա[7]: Բրիտանիայի հետազոտությունների ցանցում (http://www.mbm.org.uk/), ինչպես նաև Միջին Արևելքի ուսումնասիրությունների բրիտանական միության մեջ (http://www.brismes.ac.uk/), ի թիվս այլոց, մուսուլմաններին ներգրավելու արդյունքում առաջացած իսլամական ուսումնասիրությունների ցանցը հնարավորություն է տվել իրականացնել նոր քննարկումներ իսլամական ուսումնասիրությունների բնույթի վերաբերյալ՝ որպես գիտական ծրագիր և այն մասին, թե որքանով է այն զբաղվում Բրիտանիայում մուսուլմանների հարցերով կամ կարիքներով: Դասընթացներ են առաջարկում Լոնդոնի Մուսուլման քոլեջը և Քեմբրիջի մուսուլմանական քոլեջը՝ 2009 թվականից: Իսլամական հիմնադրամը[8]՝ որպես Լիսեսթերում գտնվող հետազոտական և ուսումնական մի կազմակերպություն, 2000 թ.-ին հիմնում է Մարքեթֆիլդի բարձրագույն ինստիտուտը[9], որն ասպիրանտուրայի/գիտական աստիճաններ և վկայականներ է առաջարկում իսլամագիտության, մուսուլմանական համայնքի ուսումնասիրությունների և իսլամական բանկային գործունեության ու ֆինանսների կառավարման ոլորտներում: 2012-ին նաև ներդրվեց մի մագիստրոսական ծրագիր, որը հիմնականում ուղղված էր մուսուլմանական կրթական հաստատությունների շրջանավարտներին:

Նիդեռլանդներում՝ *հոլանդական հանրակրթության համակարգում կա 41 իսլամական դպրոց՝ երկու միջնակարգ, մնացածը հիմնական: Սա ներկայացնում է երկրի բոլոր հիմնական դպրոցների 0.6%-ը: Ինչպես պետական դպրոցները, այնպես էլ կրոնա-*

կան խմբերի կողմից հիմնադրված բոլոր մյուս դավանաբանական դպրոցները, ֆինանսավորվում են պետության կողմից և ենթակա են դավանանքի և պետական դպրոցների միջև կրթության ազատության և ֆինանսական հավասարության սկզբունքին: Դպրոցների իսլամական բնույթն ակնհայտ է նրանց իսլամական էթոսով, բայց դպրոցական ուսումնական պլանը նույնն է, ինչ՝ այլ դավանանքի և պետական դպրոցներում: Կրթության նախարարության կողմից արդեն մի քանի տարի է լուրեր են հայտնվում իսլամական դպրոցներում կրթական ռեժիմին վերաբերող խնդիրների և, որոշ դեպքերում, ուսումնական ծրագրի հակահնտեգրացիոն բովանդակության և ֆինանսների սխալ կառավարման վերաբերյալ կասկածների մասին[10]: Պետական դպրոցները պարտավոր չեն առաջարկել իսլամական դասեր իրենց աշակերտներին. այնուամենայնիվ, եթե ծնողները դիմում են իսլամական դասերի խնդրանքով, պետական դպրոցները պետք է բավարարեն այն և առաջարկեն այդ դասերը սովորական ուսումնական ծրագրի շրջանակներում: Այս դասերը վարում են դրսից հրավիրված ուսուցիչներ: Հանրակրթական դպրոցներում կրոնական դասերը ֆինանսավորվում են քաղաքապետարանների կողմից ճանաչված կրոնական տարածքային կազմակերպությունների և կրոնական հաստատությունների կողմից: Գոյություն ունեն երկու իսլամական (սունի) համալսարաններ՝ Իսլամական համալսարանը և Եվրոպական իսլամական համալսարանը, երկուսն էլ Ռոտերդամում: Մահմեդական կազմակերպությունների և հոլանդական կառավարության միջև երկար քննարկումներից հետո՝ 2005թ. ստեղծվել է ուսուցման երկու ակադեմիական կենտրոն՝ մեկը՝ Ամստերդամում[11], մյուսը՝ Լեյդենի համալսարանի կրոնագիտական հետազոտությունների ինստիտուտում[12]: Մի քանի այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ առաջարկում են իսլամի կամ Մերձավոր Արևելքի ուսումնասիրությունների ակադեմիական դասընթացներ:

Բելգիայում *երկրի հանրային նախակրթարանները և հանրակրթական դպրոցները հնարավորություն են տալիս շաբաթական երկու ժամ տրամադրել ճանաչված կրոնների դասերի կամ ոչ դավանաբանական էթիկայի դասերի համար: Այս ընդհանուր շրջանակներում, իսլամական դավանանքի դասերը 1975 թվականից կազմակերպվում են ինչպես՝ հոլանդախոս, այնպես էլ՝ ֆրանսախոս հանրային դպրոցներում: Այս դասերի ուսուցիչներին վարձատրում են համապատասխան լեզվական համակարգ ունեցող պետական մարմինները: Բավականին երկար ժամանակ այս ուսուցիչները ներգաղթյալների հայրենի երկրներից էին լինում և հաճախ բավարար պատրաստված չէին դասավանդելու համար (նրանք չունեին անհրաժեշտ կրթություն և/կամ հոլանդերենի կամ ֆրանսերենի հմտություններ): 2003 թ. նշանակվեցին տեսուչների հատուկ թիմեր (երեք հոլանդերեն և երեք ֆրանսախոս տեսուչ), սակայն իսլամական կրոնի ուսուցիչները չունեն հստակ աշխատանքային կարգավիճակ: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ ոչ մի համաձայնեցված ուսումնական ծրագիր գոյություն չունի, և որ անհավասարություններ կան վճարման, ստաժի, նշանակումների և կենսաթոշակների հարցում՝ համեմատած կրթական համակարգի մյուս ուսուցիչների հետ: Իսլամի կրոնական դասեր անցկացվում են հանրային տարրական և միջնակարգ դպրոցներում: Այս դասընթացների մասնակցում են տասնյակ հազարավոր աշակերտներ: Բելգիայի օրենսդրությունը թույլ է տալիս ստեղծել մասնավոր կրոնական դպրոցներ, որոնք իրավասու կլինեն պետական ֆինանսավորման՝ պայմանով, որ դրանք համապատասխանեն իրավական պայմաններին: Առաջին նման դավանաբանական մուսուլմանական դպրոցը 1989 թվականին հիմնադրված Ալ-Ղազալի/Al-Ghazali դպրոցն էր, որը ղեկավարում էր Բրյուսելի մշակութային և իսլամական կենտրոնը: Այն ժամանակ դրա ստեղծումը լուրջ քաղաքական և լրատվամիջոցների արձագանքների տեղիք տվեց: Երկրորդ նախաձեռնությունը եղավ 2007-ի սեպտեմբերին՝ միայն որոշ աշակերտների համար Ավիցենայի իսլամական միջնակարգ դպրոցի բացմամբ՝ մեծ թվով մուսուլմանական բնակչություն*

ունեցող Բրյուսելի (Մոլենբեկ) թաղամասում: Հարկ է նշել նաև Լյուցեռնի վեց դպրոցները (Գյուլենի շարժման ղեկավարած), որոնք հիմնադրվել են ամբողջ երկրում և բավականին հաջողակ են՝ չնայած հրաժարվում են «մուսուլմանական դպրոց» պիտակից: Բացի հանրակրթական դպրոցներում, ֆլամանդական կաթոլիկական որոշ դպրոցներում և Բրյուսելի մի քանի իսլամական դպրոցներում դասավանդվող իսլամի դասերից, բելգիական մզկիթները հիմնականում իրականացնում են Ղուրանի ուսուցման արաբերեն, թուրքերեն, ֆրանսերեն և հոլանդերեն դասընթացներ՝ հիմնականում չորեքշաբթի երեկոյան և հանգստյան օրերին: Բելգիայի համալսարաններում և այլ կրթական կառույցներում գործում են իսլամագիտության դասընթացներ, իսլամ մասնագիտությամբ հետբուհական/ասպիրանտական ծրագրեր՝ իսլամի ուսուցիչների համար: Կան հատուկ կրթա-մշակութային հաստատություններ, որոնցից են Բրյուսելի մշակութային և իսլամական կենտրոնը (Centre Culturel et Islamique de BruxeLtes), Իսլամական ուսումնասիրությունների եվրոպական ինստիտուտը/Institut Islamique Europeen d'Etudes (IIEES) և այլն:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ արևմտաեվրոպական երկրների մուսուլմանական համայնքներում բավականին արդյունավետ և համակարգված աշխատանքներ են տարվում միջնակարգ և բարձրագույն իսլամական դպրոցների ցանց ստեղծելու և պահպանելու համար: Արդյունքում՝ այն նպաստում է ոչ թե ինտեգրացմանը, այլ՝ եվրոպական արժեհամակարգից հեռացմանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ֆրանսիայի իսլամական դպրոցների մասին տե՛ս John, R. Bowen, L'islam a la frangaise. Enquete, (Paris: Steinkis, 2010).
2. Kaplan, Ismail, Alevitischer Religionsunterricht an den Schulen, Die Stimme der Aleviten, July 2009, pp. 28–32.
3. Տե՛ս www.deutsche-islam konferenz.de/SharedDocs/Anlagen/DIK/DE/Downloads/Sonstiges/2008-IRU-zwischenresumee-der-dik.pdf?__blob=publicationFile.
4. Տե՛ս 2010թ. հունվարի 15-ի Դպրոցների նախարարության պաշտոնական հայտարարությունը, հասանելի է https://www.verkuendung-bayern.de/kwmbl/jahrgang:2010/heftnummer:4/seite:38, և DIK-ի զեկույցը "Engagement muslimischer Eltern in Erlangen fur islamischen Religionsunterricht, հասանելի է www.deutsche-islam-konferenz.de/DIK/DE/Magazin/IslamSchule/Engagement/engagement-node.html :
5. Ուսումնական նյութերն առկա են հետևյալ հրատարակություններում. Lamya Kaddor/Rabeya Muller/Harun Behr (eds.), Saphir 5/6, Religionsbuch fur junge Musliminnen und Muslime (Munich: Kosel, 2008); Serap Erkan et al. (eds.), Mein Islambuch (Munich: Oldenbourg 2009):
6. Բրիտանական մուսուլմանների կրթության մասին առավել մանրամասն տե՛ս Halstead, Mark, British Muslims and Education (Budapest and New York: Open Society Institute, 2005).
7. Տե՛ս www.hefce.ac.uk/whatwedo/kes/sis/islamicstudies/:
8. Տե՛ս www.islamic-foundation.org.uk:
9. Տե՛ս www.mihe.org.uk:
10. Driessen, Geert and M.S. Merry, "Islamic schools in the Netherlands: Expansion or marginalisation", Interchange, vol. 27, no. 3 (2003), pp. 201-223; Driessen, Geert and P. Valkenberg, "Islamic schools in the Netherlands: Compromising between identity and quality", British Journal of Religious education, vol. 23, no. 1 (2000),

pp. 15-26.
11. Տե՛ս www.godgeleerdheid.vu.nl/en/organisation/faculty-departments/center-for-islamic-theology/index.asp
12. Տե՛ս www.hum.leiden.edu/religion/

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Իսլամական կրթության կազմակերպումն արևմտաևրոպական երկրներում
Նունե Մելքոնյան

Մեր կողմից հետազոտության համար ընտրված երկրներում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Նիդեռլանդներում, Բելգիայում մուսուլմանական բնակչության՝ եվրոպական արժեհամակարգին ընտեգրվելու գործում էական նշանակություն ունի կրթական գործող համակարգը: Արևմտյան ժողովրդավարությունների ընձեռնած լայն ազատություններից օգտվելով՝ մուսուլմանական համայնքները ստեղծել են միջնակարգ և բարձրագույն իսլամական դպրոցների ցանց: Իրավիճակի ուսումնասիրություններն այս ոլորտում, ցույց են տալիս, որ մուսուլմանները, ստեղծելով իրենց կրթական հաստատությունները, ոչ թե՝ ինտեգրվում, այլ ավելի են հեռանում եվրոպական հասարակություններից:

РЕЗЮМЕ
Организация исламского образования в странах западной Европы
Нуне Мелконян

Ключевые слова: Западная Европа, мусульманские общины, исламское образование, университеты, школы, религия.

В выбранных нами странах, во Франции, Германии, Великобритании, Нидерландах и Бельгии, существующая система образования имеет решающее значение для интеграции мусульманского населения к европейским ценностям. Воспользовавшись обширными свободами, предоставляемыми западными демократиями, мусульманские общины создали сеть исламских средних школ. Исследования ситуации в этой сфере показывают, что мусульмане, создавая собственные учебные заведения, не интегрируются, а отдаляются от европейских обществ.

SUMMARY
Organization of Islamic Education in the Countries of Western Europe
Nune Melkonyan

Key words: Western Europe, Muslim communities, Islamic education, universities, schools, religion.

In the countries of our choice, France, Germany, Great Britain, the Netherlands and Belgium, the existing education system is critical for the integration of the Muslim population towards European values. Taking advantage of the vast freedoms afforded by Western democracies, Muslim communities have created a network of Islamic high schools. Studies of the situation in this area show that Muslims, creating their own educational institutions, do not integrate, but move away from European societies.